

միս չուտել: 2.— «Դուրս ելլելու» համար յարմար ժամանակը առտուն է. այսուհանդերձ սովորութեան խնդիր է եւ իրիկունքը «դուրս ելլելը» անպատեհութիւն մը չի ներկայացնիր, կը բաւ որ կանոնադրաբար տեղի ունենայ: Աւելցնենք որ ամէն օր «դուրս ելլելու» իսկ, մարդ կրնայ պնդութիւն ունենալ, եթէ բաւականաչափ չարտաքսէ: 3.— Սուր յօդացաւ բուսիլ է, պայմանով որ միայն «ժամանակ» մը դեղ չառնուի, այլ անքան առտուն որ անհրաժեշտ է հիւանդութիւնը հիմնովին բուժելու համար, ինչ որ բժիշկ մը կրնայ որոշել: Գալով քրոնիկ յօշացաւին, ան ալ բուժելի է, բայց կը պահանջէ մասնաւոր անդառնութիւն, յարմար կլիմայ, երկարատեւ խնամք ու դարման: Հիւանդները ամէն դեղ ու դարման կը դադրեցնեն անմիջապէս որ ցաւը դադրէ. ասոր համար ալ ցաւը կը վերադառնայ ու կը կարծեն եւ հիւանդութիւնը անբուժելի է: Զեր փափաքին գոհացում տալու համար առանձին յօդուած մը պիտի հրատարակենք:

Լ Ա՛ Լ Թ Է Խ Ն Դ Ա Լ

Հայ մը կը ներկայանայ փարիզահայ ատամնաբոյժի մը, բաւական փտած ակուայ մը դարմանել համար եւ գինը կը հարցնէ: Ատամնաբոյժը նուազագոյն գին մը կ'ըսէ: Երբ բարեկամը, տեսնելով որ ակուան դարմանելն ու լեցնելը աւելի սուղ է, քան զայն հախել տալը, կ'ըսէ.

— Անանկ է նէ, ժամանակ մըն ալ գործածեմ ակուաս. երբ լաւ մը փտի, կու գամ քաշել տալու...

* * *

Այսինչ բժիշկը շատ դժամասէր է, կ'ըսէր տարեց եւ բարեկիրձ կին մը, երբ, իբրեւ հիւր, անոր այցելութեան գացեր էի: Պատճառը հարցուցի:

— Որովհետեւ երեք անգամ այցելեցի, տակաւին հիւանդութիւնս չբուժեց, եւ ուզեց որ դարձեալ այցելեմ:

— Ի՞նչ հիւանդութենէ կը տառապիք, տիկին, հարցուցի:

— Շաքարախտէ, Տօքթոր, պատասխանեց:

Իրօք որ դժամասէր է եղեր այդ բժիշկը. ինչո՞ւ մէկ անգամէն չբուժեց շաքարախտը...

ԸՆԹԵՐՑՈՂ

ԴՈՒՆ ՈՐ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»Ը, կը կարգաս և կ'օգտուի,

ԶԵՍ ՈՒՋԵՐ ՃԻՓ ՄԸ ԸՆՆԼ, տարածելու համար քու թերթդ, բաժանորդագրելով **ծանօթներդ, որպէսզի ուրիշներն ալ կարդան,** սիրեն և օգտուին **«Բուժանք»էն և զարգացնեն զայն:**

ԻՍԿ ԴՈՒՆ ՈՐ ՈՒՐԻՇԻՆ «ԲՈՒԺԱՆՔ»Ը ԿԸ ԿԱՐԴԱՍ, գիտցիր որ չի բաւեր կարդալ, **այլ պէտք է ունենալ և պահել «Բուժանք»ը,** որուն մէկ խորհուրդը կրնայ քանի մը անգամ փոխարինել տուած բաժնեգրինդ:

ՈՒՐԵՄՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԷ: